# ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ՆԳՆ Ո ՄԱԾՁԲ-2023-ԱՎԾ/Ա-38

ք. Երևան

<<08>> 06. 2023 թ.

ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ա. Հովհաննիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն, Վ. Գզրարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Օրենսդրություններ բաժնի ,Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **11 986 290** (տասնմեկ միլիոն ինը հարյուր ութսուն վեց հազար երկու հարյուր իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա **դեկտեմբերի 25-ը**:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Կատարողի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի` պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ բաժնում` նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված` ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 36 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
ՀՀ ՆԳՆ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական
վարչություն
*Հ/Հ 900011021947*
*ՀՎՀՀ 01533334*
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ police_gnumner@police.am

_______________ Ա. Հովհաննիսյան
/ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-
ներքին գործերի նախարարի
տեղակալ, ոստիկանության գեներալ-
մայոր/
(ստորագրություն)
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Բայրոնի փող. 3
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1570003667300100
ՀՎՀՀ 01557589
հեռ. 010 77-70-10

Էլ. փոստ: info@toyota.am

_______________ Վ. Գզրարյան
տնօրեն
(ստորագրություն)
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
<< 08 >> 06. 2023 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ Ո ՄԱԾՁԲ-2023-ԱՎԾ/Ա-38 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը** |
| 1 | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում CPV կոդը – 50111130/12 | Կատարողը պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝ սպասարկման տարածքում ավտոպահեստամասերի պահեստի կամ խանութի առկայություն, պետք է ունենա վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը, էլեկտրականության,յուղման, ընթացամասի, վուլկանացման, անվաբացքի կարգավորման, շարժիչի, մեքենայի ախտորոշման, զոդման, թիթեղագործի և ներկման | դրամ | 11 986 290 | 1 | ք. Երևան Ծ. Իսակովի 7 | Պայմանագիրը ուժի մտնելուց օր հետո Բայց ոչ ուշ, քան 20.12.2023 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | աշխատանքները իրականացնելու հնարավորրություն: Կատարողը 3 օրվա ընթացքում պետք է ապահովի ավտոմեքենայի ախտորոշումը՝ տրամադրելով ավտոմեքենայի վրա իրականացվելիք աշխատանքների, երաշխիքների, դրանց կատարման ժամկետների մասին տեղեկանք, ընդ որում՝ աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 30 օրից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը Պատվիրատուին տրամադրում է տեղեկանք-հիմնավորում այն մասին, որ ծառայությունների մատուցումը 30 օրում անհնարին է, որի մասով Պատվիրատուի կողմից սահմանվում է ծառայությունների մատուցման խելամիտ ժամկետ:<br>Ավտոմեքենան տեխնիկական կայան ժամանելուց՝ առավելագույնը 5 (հինգ) օրում, պետք է սկսվի ավտոմեքենայի սպասարկման գործընթացը(ծառայությունների մատուցումը): | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կատարողի կողմից սպասարկումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում: Կատարողը պետք է ունենա առնվազն թվով 15 (տասնհինգ) ավտոմեքենայի համար նախատեսված կայանման(պահպանման) վայր, ընդ որում ավտոմեքենաների այնտեղ գտնվելու ամբողջ ընթացքում՝ Կատարողի կողմից պետք է իրականացվի շուրջօրյա (24 ժամ) տեսահսկման և պահակային հսկողություն և այդ ընթացքում իրականացված տեսաձայնագրությունը պետք է պահպանվի առնվազն 30(երեսուն) օր և պահանջի դեպքում 1(մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվի Պատվիրատուին: Փոխարինված ավտոմասերը պահանջի դեպքում՝ մեկօրյա ժամկետում, պետք է վերադարձվեն Պատվիրատուի ներկայացուցչին: Նորոգման ծառայությունները պետք է իրականացվեն կից | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ներկայացված ցանկին համապատասխան:<br>Տեխսպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա քարշակ՝ Երևան քաղաքի վարչական տարածքում քարշակի ծառայությունը մինչև տեխնիկական սպասարկման կենտրոն պետք է կատարվի սպասարկողի կողմից:<br>Երաշխիքներ՝ կատարված աշխատանքներ համար 1 տարի, պահեստամասերի համար 6 ամիս:<br>Ավտոպահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ,Տոյոտա մակնիշի:<br><br>Տես՝ Հավելված 1,2,3,4,5,6,7,8,9,10 | | | | | |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ ՆԳՆ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական
վարչություն
*Հ/Հ 900011021947*
*ՀՎՀՀ 01533334*
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝
police_gnumner@police.am

________________ Ա. Հովհաննիսյան
/ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-
ներքին գործերի նախարարի
տեղակալ, ոստիկանության
գեներալ-մայոր/
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Բայրոնի փող. 3
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1570003667300100
ՀՎՀՀ 01557589
հեռ. 010 77-70-10

Էլ. փոստ: info@toyota.am

տնօրեն ________________ Վ. Գզրարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 1

| Ավտոմեքենայի Տվյալներ | |
|---|---|
| Մակնիշ | TOYOTA |
| Մոդել | RAV4 |
| Շարժիչ | 3 |
| Տարեթիվ | 2022 |
| Պետ. Համարանիշ | 032 CL 61 |
| Նույնականացման համար | XW7R13FV70S037696 |

| ՀԱվելված |
|---|
| № 2023/1 |
| 10.03.2023թ. |
| |
| |
| |
| |

| # | Նկարագրություն | Քանակ | Հատի գին ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** | Գումար ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** |
|---|---|---|---|---|
| 1 | Թափքի նորոգման և ներկման աշխատանքներ | 1.00 | 120,600.00 դր. | 120,600.00 դր. |
| 2 | | | | |
| 3 | | | | |
| 4 | | | | |
| 5 | | | | |
| 6 | | | | |
| 7 | | | | |
| 8 | | | | |
| 9 | | | | |
| 10 | | | | |
| 11 | | | | |
| 12 | | | | |
| 13 | | | | |
| 14 | | | | |
| 15 | | | | |
| 16 | | | | |
| 17 | | | | |
| 18 | | | | |
| 19 | | | | |
| 20 | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 21 | | | | |
| 22 | | | | |
| 23 | | | | |
| 24 | | | | |
| 25 | | | | |
| 26 | | | | |
| 27 | | | | |
| 28 | | | | |
| 29 | | | | |
| 30 | | | | |
| նդամենը ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ **20%**) | | | **120,600.00** դր. | |

Հավելված 2

| Ավտոմեքենայի Տվյալներ | |
|---|---|
| Մակնիշ | TOYOTA |
| Մոդել | RAV4 |
| Շարժիչ | 3 |
| Տարեթիվ | 2022 |
| Պետ. Համարանիշ | 034 CL 61 |
| Նույնականացման համար | XW7R13FV40S037686 |

| ՀԱվելված |
|---|
| № 2023/2 |
| 10.03.2023թ. |
| |
| |
| |
| |

| # | Նկարագրություն | Քանակ | Հատի գին ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** | Գումար ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** |
|---|---|---|---|---|
| 1 | Թափքի նորոգման և ներկման աշխատանքներ | 1.00 | 423,000.00 դր. | 423,000.00 դր. |
| 2 | Դուռ | 1.00 | 232,200.00 դր. | 232,200.00 դր. |
| 3 | Դռան ծխնի | 1.00 | 18,000.00 դր. | 18,000.00 դր. |
| 4 | Մոլդինգ | 1.00 | 31,500.00 դր. | 31,500.00 դր. |
| 5 | Դուռ | 1.00 | 255,600.00 դր. | 255,600.00 դր. |
| 6 | Մոլդինգ | 1.00 | 51,300.00 դր. | 51,300.00 դր. |
| 7 | Մեկանգամյա օգտագործման ամրակ | 20.00 | 450.00 դր. | 9,000.00 դր. |
| 8 | | | | |
| 9 | | | | |
| 10 | | | | |
| 11 | | | | |
| 12 | | | | |
| 13 | | | | |
| 14 | | | | |
| 15 | | | | |
| 16 | | | | |
| 17 | | | | |
| 18 | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 19 | | | | |
| 20 | | | | |
| 21 | | | | |
| 22 | | | | |
| 23 | | | | |
| 24 | | | | |
| 25 | | | | |
| 26 | | | | |
| 27 | | | | |
| 28 | | | | |
| 29 | | | | |
| 30 | | | | |
| ...ղամենը ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ **20%**) | | | **1,020,600.00** դր. | |

Հավելված 3

| Ավտոմեքենայի Տվյալներ | |
|---|---|
| Մակնիշ | TOYOTA |
| Մոդել | RAV4 |
| Շարժիչ | 3 |
| Տարեթիվ | 2022 |
| Պետ. Համարանիշ | 145 CL 61 |
| Նույնականացման համար | XW7R13FV90S037795 |

| ՀԱվելված |
|---|
| № 2023/3 |
| 10.03.2023թ. |
| |
| |
| |
| |

| # | Նկարագրություն | Քանակ | Հատի գին ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** | Գումար ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** |
|---|---|---|---|---|
| 1 | Թափքի նորոգման և ներկման աշխատանքներ | 1.00 | 405,000.00 դր. | 405,000.00 դր. |
| 2 | Բամպեր | 1.00 | 91,800.00 դր. | 91,800.00 դր. |
| 3 | Երեսվածք | 1.00 | 43,200.00 դր. | 43,200.00 դր. |
| 4 | Բամպերի վրադիր | 1.00 | 82,800.00 դր. | 82,800.00 դր. |
| 5 | Բամպերի խցան | 1.00 | 19,800.00 դր. | 19,800.00 դր. |
| 6 | Հակամառախուղային լապտեր | 1.00 | 48,600.00 դր. | 48,600.00 դր. |
| 7 | Լուսարձակի մաքրիչ | 1.00 | 45,900.00 դր. | 45,900.00 դր. |
| 8 | Լուսարձակի մաքրիչի կափարիչ | 1.00 | 3,600.00 դր. | 3,600.00 դր. |
| 9 | Լուսարձակի մաքրիչի ամրան | 1.00 | 1,800.00 դր. | 1,800.00 դր. |
| 10 | Հայելի | 1.00 | 158,400.00 դր. | 158,400.00 դր. |
| 11 | Հայելու կափարիչ | 1.00 | 24,300.00 դր. | 24,300.00 դր. |
| 12 | Անվածածկ | 1.00 | 96,300.00 դր. | 96,300.00 դր. |
| 13 | Անվածածկի պաշտպանիչ | 1.00 | 29,700.00 դր. | 29,700.00 դր. |
| 14 | Ցայտապաշտպան | 1.00 | 6,300.00 դր. | 6,300.00 դր. |
| 15 | Բամպերի ամրան | 1.00 | 23,400.00 դր. | 23,400.00 դր. |
| 16 | Պաշտպանիչ | 1.00 | 53,100.00 դր. | 53,100.00 դր. |
| 17 | Պաշտպանիչ | 1.00 | 79,200.00 դր. | 79,200.00 դր. |
| 18 | Մեռլինգ | 1.00 | 25,200.00 դր. | 25,200.00 դր. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 19 | Մոլդինգ | 1.00 | 55,800.00 դր. | 55,800.00 դր. |
| 20 | Մոլդինգ | 1.00 | 35,100.00 դր. | 35,100.00 դր. |
| 21 | Մեկանգամյա օգտագործման ամրակ | 20.00 | 450.00 դր. | 9,000.00 դր. |
| 22 | | | | |
| 23 | | | | |
| 24 | | | | |
| 25 | | | | |
| 26 | | | | |
| 27 | | | | |
| 28 | | | | |
| 29 | | | | |
| 30 | | | | |
| ...նդամենը ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ **20%**) | | | **1,338,300.00** դր. | |

Հավելված 4

| Ավտոմեքենայի Տվյալներ | |
|---|---|
| Մակնիշ | TOYOTA |
| Մոդել | CAMRY |
| Շարժիչ | 3 |
| Տարեթիվ | 2022 |
| Պետ. Համարանիշ | 010 CL 61 |
| Նույնականացման համար | XW7B14HK10S223471 |

| ՀԱվելված |
|---|
| № 2023/4 |
| 10.03.2023թ. |
| |
| |
| |
| |

| # | Նկարագրություն | Քանակ | Հատի գին ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** | Գումար ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** |
|---|---|---|---|---|
| 1 | Թափքի նորոգման և ներկման աշխատանքներ | 1.00 | 405,000.00 դր. | 405,000.00 դր. |
| 2 | Բամպեր | 1.00 | 90,000.00 դր. | 90,000.00 դր. |
| 3 | Կայանման սենսորայի տվիչի ամրան | 2.00 | 3,600.00 դր. | 7,200.00 դր. |
| 4 | Երեսվածք | 1.00 | 117,000.00 դր. | 117,000.00 դր. |
| 5 | Համարի տակդիր | 1.00 | 24,300.00 դր. | 24,300.00 դր. |
| 6 | Բամպերի վրադիր | 1.00 | 32,400.00 դր. | 32,400.00 դր. |
| 7 | Երեսվածք | 1.00 | 99,000.00 դր. | 99,000.00 դր. |
| 8 | Տարբերանշան | 1.00 | 22,500.00 դր. | 22,500.00 դր. |
| 9 | Հակամառախուղային լապտեր | 1.00 | 45,000.00 դր. | 45,000.00 դր. |
| 10 | Լուսարձակի մաքրիչ | 1.00 | 27,000.00 դր. | 27,000.00 դր. |
| 11 | Լուսարձակի մաքրիչի կափարիչ | 1.00 | 4,500.00 դր. | 4,500.00 դր. |
| 12 | Լուսարձակի մաքրիչի ամրակ | 1.00 | 1,800.00 դր. | 1,800.00 դր. |
| 13 | Մոլդինգ | 1.00 | 43,200.00 դր. | 43,200.00 դր. |
| 14 | Բամպերի ամրան | 1.00 | 19,800.00 դր. | 19,800.00 դր. |
| 15 | Անվածածկ | 1.00 | 74,700.00 դր. | 74,700.00 դր. |
| 16 | Լուսարձակ | 1.00 | 366,300.00 դր. | 366,300.00 դր. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 17 | ԼԵԴ բլոկ | 1.00 | 146,700.00 դր. | 146,700.00 դր. |
| 18 | Պաշտպանիչ | 1.00 | 79,200.00 դր. | 79,200.00 դր. |
| 19 | Պաշտպանիչ | 1.00 | 31,500.00 դր. | 31,500.00 դր. |
| 20 | Բամպերի պենոպլաստ | 1.00 | 18,000.00 դր. | 18,000.00 դր. |
| 21 | Ռադիատորի սուպորտի մաս | 1.00 | 33,300.00 դր. | 33,300.00 դր. |
| 22 | Թափքի ամրան | 1.00 | 22,500.00 դր. | 22,500.00 դր. |
| 23 | Ձայնային ազդանշան | 1.00 | 25,200.00 դր. | 25,200.00 դր. |
| 24 | Մեկանգամյա օգտագործման ամրակ | 30.00 | 450.00 դր. | 13,500.00 դր. |
| 25 | | | | |
| 26 | | | | |
| 27 | | | | |
| 28 | | | | |
| 29 | | | | |
| 30 | | | | |
| ...ընդամենը ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ **20%)** | | | **1,749,600.00** դր. | |

Հավելված 5

| Ավտոմեքենայի Տվյալներ | |
|---|---|
| Մակնիշ | TOYOTA |
| Մոդել | RAV4 |
| Շարժիչ | 3 |
| Տարեթիվ | 2022 |
| Պետ. Համարանիշ | 282 CL 61 |
| Նույնականացման համար | XW7R13FV90S037912 |

| ՀԱվելված |
|---|
| № 2023/5 |
| 10.03.2023թ. |
| |
| |
| |
| |

| # | Նկարագրություն | Քանակ | Հատի գին ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** | Գումար ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** |
|---|---|---|---|---|
| 1 | Թափքի նորոգման և ներկման աշխատանքներ | 1.00 | 621,000.00 դր. | 621,000.00 դր. |
| 2 | Շարժիչի ծածկոց | 1.00 | 324,900.00 դր. | 324,900.00 դր. |
| 3 | Շարժիչի ծածկոցի ծխնի | 1.00 | 18,900.00 դր. | 18,900.00 դր. |
| 4 | Շարժիչի ծածկոցի ծխնի | 1.00 | 18,900.00 դր. | 18,900.00 դր. |
| 5 | Շարժիչի ծածկոցի փական | 1.00 | 27,000.00 դր. | 27,000.00 դր. |
| 6 | Բամպեր | 1.00 | 108,000.00 դր. | 108,000.00 դր. |
| 7 | Երեսվածք | 1.00 | 52,200.00 դր. | 52,200.00 դր. |
| 8 | Երեսվածքի ամրան | 1.00 | 67,500.00 դր. | 67,500.00 դր. |
| 9 | Մոլդինգ | 1.00 | 12,600.00 դր. | 12,600.00 դր. |
| 10 | Տարբերանշան | 1.00 | 23,400.00 դր. | 23,400.00 դր. |
| 11 | Ռադիատորի սուպորտի մաս | 1.00 | 32,400.00 դր. | 32,400.00 դր. |
| 12 | Ռադիատորի սուպորտի մաս | 1.00 | 29,700.00 դր. | 29,700.00 դր. |
| 13 | Ռադիատորի սուպորտի մաս | 1.00 | 43,200.00 դր. | 43,200.00 դր. |
| 14 | Ռադիատորի սուպորտի պաշտպանիչ | 1.00 | 19,800.00 դր. | 19,800.00 դր. |
| 15 | Լուսարձակ | 1.00 | 292,500.00 դր. | 292,500.00 դր. |
| 16 | Օդի խողովակ | 1.00 | 38,700.00 դր. | 38,700.00 դր. |
| 17 | Ցայտապաշտպան | 1.00 | 7,200.00 դր. | 7,200.00 դր. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 18 | Դիմապակի | 1.00 | 299,700.00 դր. | 299,700.00 դր. |
| 19 | Դիմապակու ռետին | 1.00 | 6,300.00 դր. | 6,300.00 դր. |
| 20 | Դիմապակու ռետին | 1.00 | 40,500.00 դր. | 40,500.00 դր. |
| 21 | Դիմապակու ռետին | 1.00 | 25,200.00 դր. | 25,200.00 դր. |
| 22 | Ֆրեոնի խողովակի ամրակ | 1.00 | 3,600.00 դր. | 3,600.00 դր. |
| 23 | Մեկանգամյա օգտագործման ամրակ | 28.00 | 450.00 դր. | 12,600.00 դր. |
| 24 | | | | |
| 25 | | | | |
| 26 | | | | |
| 27 | | | | |
| 28 | | | | |
| 29 | | | | |
| 30 | | | | |
| **ադամենը ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ 20%)** | | | **2,125,800.00** դր. | |

Հավելված 6

| Ավտոմեքենայի Տվյալներ | |
|---|---|
| Մակնիշ | TOYOTA |
| Մոդել | CAMRY |
| Շարժիչ | 3 |
| Տարեթիվ | 2022 |
| Պետ. Համարանիշ | 406 CG 61 |
| Նույնականացման համար | XW7B14HK80S222575 |

| ՀԱվելված |
|---|
| № 2023/6 |
| 10.03.2023թ. |
| |
| |
| |
| |

| # | Նկարագրություն | Քանակ | Հատի գին ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** | Գումար ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** |
|---|---|---|---|---|
| 1 | Թափքի նորոգման և ներկման աշխատանքներ | 1.00 | 162,000.00 դր. | 162,000.00 դր. |
| 2 | Դուռ | 1.00 | 250,200.00 դր. | 250,200.00 դր. |
| 3 | Պաշտպանիչ ժապավեն | 1.00 | 11,700.00 դր. | 11,700.00 դր. |
| 4 | Պաշտպանիչ ժապավեն | 1.00 | 6,300.00 դր. | 6,300.00 դր. |
| 5 | Հայելի | 1.00 | 146,700.00 դր. | 146,700.00 դր. |
| 6 | Հայելու կափարիչ | 1.00 | 25,200.00 դր. | 25,200.00 դր. |
| 7 | Մեկանգամյա օգտագործման ամրակ | 12.00 | 450.00 դր. | 5,400.00 դր. |
| 8 | | | | |
| 9 | | | | |
| 10 | | | | |
| 11 | | | | |
| 12 | | | | |
| 13 | | | | |
| 14 | | | | |
| 15 | | | | |
| 16 | | | | |
| 17 | | | | |
| 18 | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 19 | | | | |
| 20 | | | | |
| 21 | | | | |
| 22 | | | | |
| 23 | | | | |
| 24 | | | | |
| 25 | | | | |
| 26 | | | | |
| 27 | | | | |
| 28 | | | | |
| 29 | | | | |
| 30 | | | | |
| ...նդամենը ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ **20%**) | | | **607,500.00** դր. | |

Հավելված 7

| Ավտոմեքենայի Տվյալներ | |
|---|---|
| Մակնիշ | TOYOTA |
| Մոդել | RAV4 |
| Շարժիչ | 3 |
| Տարեթիվ | 2022 |
| Պետ. Համարանիշ | 294 CL 61 |
| Նույնականացման համար | XW7R13FV70S037875 |

| ՀԱՎելված |
|---|
| № 2023/7 |
| 10.03.2023թ. |
| |
| |
| |
| |

| # | Նկարագրություն | Քանակ | Հատի գին ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** | Գումար ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** |
|---|---|---|---|---|
| 1 | Թափքի նորոգման և ներկման աշխատանքներ | 1.00 | 342,000.00 դր. | 342,000.00 դր. |
| 2 | Շարժիչի ծածկոց | 1.00 | 280,800.00 դր. | 280,800.00 դր. |
| 3 | Անվածածկ | 1.00 | 96,300.00 դր. | 96,300.00 դր. |
| 4 | Բամպերի ամրան | 1.00 | 23,400.00 դր. | 23,400.00 դր. |
| 5 | Մոլդինգ | 1.00 | 25,200.00 դր. | 25,200.00 դր. |
| 6 | Լուսարձակ | 1.00 | 253,800.00 դր. | 253,800.00 դր. |
| 7 | Միացուցիչ | 1.00 | 5,400.00 դր. | 5,400.00 դր. |
| 8 | Երեսվածք | 1.00 | 43,200.00 դր. | 43,200.00 դր. |
| 9 | Երեսվածք | 1.00 | 82,800.00 դր. | 82,800.00 դր. |
| 10 | Լուսարձակի մաքրիչ | 1.00 | 45,900.00 դր. | 45,900.00 դր. |
| 11 | Լուսարձակի մաքրիչի կափարիչ | 1.00 | 3,600.00 դր. | 3,600.00 դր. |
| 12 | Լուսարձակի մաքրիչի ամրան | 1.00 | 1,800.00 դր. | 1,800.00 դր. |
| 13 | Խցան | 1.00 | 5,400.00 դր. | 5,400.00 դր. |
| 14 | Խցան | 1.00 | 5,400.00 դր. | 5,400.00 դր. |
| 15 | Շրջանակ | 1.00 | 19,800.00 դր. | 19,800.00 դր. |
| 16 | Լամպ | 1.00 | 9,900.00 դր. | 9,900.00 դր. |
| 17 | Խողովակի կցամաս | 1.00 | 3,600.00 դր. | 3,600.00 դր. |
| 18 | Բամպերի պենոպլաստ | 1.00 | 16,200.00 դր. | 16,200.00 դր. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 19 | Բամպերի բալկա | 1.00 | 85,500.00 դր. | 85,500.00 դր. |
| 20 | Ջրի տարա | 1.00 | 27,000.00 դր. | 27,000.00 դր. |
| 21 | Ջրի տարայի խողովակ | 1.00 | 11,700.00 դր. | 11,700.00 դր. |
| 22 | Ռադիատորի սուպորտի մաս | 1.00 | 30,600.00 դր. | 30,600.00 դր. |
| 23 | Բամպեր | 1.00 | 91,800.00 դր. | 91,800.00 դր. |
| 24 | Մեկանգամյա օգտագործման ամրակ | 20.00 | 450.00 դր. | 9,000.00 դր. |
| 25 | | | | |
| 26 | | | | |
| 27 | | | | |
| 28 | | | | |
| 29 | | | | |
| 30 | | | | |
| **նդամենը ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ 20%)** | | | **1,520,100.00 դր.** | |

Հավելված 8

| Ավտոմեքենայի Տվյալներ | |
|---|---|
| Մակնիշ | TOYOTA |
| Մոդել | RAV4 |
| Շարժիչ | 3 |
| Տարեթիվ | 2022 |
| Պետ. Համարանիշ | 238 CL 61 |
| Նույնականացման համար | XW7R13FV60S037849 |

| ՀԱվելված |
|---|
| № 2023/8 |
| 10.03.2023թ. |
| |
| |
| |
| |

| # | Նկարագրություն | Քանակ | Հատի գին ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** | Գումար ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** |
|---|---|---|---|---|
| 1 | Թափքի նորոգման և ներկման աշխատանքներ | 1.00 | 513,000.00 դր. | 513,000.00 դր. |
| 2 | Հաղորդալարերի վերանորոգման աշխատանքներ | 1.00 | 35,370.00 դր. | 35,370.00 դր. |
| 3 | | | | |
| 4 | | | | |
| 5 | | | | |
| 6 | | | | |
| 7 | | | | |
| 8 | | | | |
| 9 | | | | |
| 10 | | | | |
| 11 | | | | |
| 12 | | | | |
| 13 | | | | |
| 14 | | | | |
| 15 | | | | |
| 16 | | | | |
| 17 | | | | |
| 18 | | | | |
| 19 | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20 | | | | |
| 21 | | | | |
| 22 | | | | |
| 23 | | | | |
| 24 | | | | |
| 25 | | | | |
| 26 | | | | |
| 27 | | | | |
| 28 | | | | |
| 29 | | | | |
| 30 | | | | |
| նդամենը ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ **20%)** | | | **548,370.00** դր. | |

Հավելված 9

| Ավտոմեքենայի Տվյալներ | |
|---|---|
| Մակնիշ | TOYOTA |
| Մոդել | CAMRY |
| Շարժիչ | 3 |
| Տարեթիվ | 2022 |
| Պետ. Համարանիշ | 412 CG 61 |
| Նույնականացման համար | XW7B14HK80S222379 |

| ՀԱվելված |
|---|
| № 2023/9 |
| 10.03.2023թ. |
| |
| |
| |
| |

| # | Նկարագրություն | Քանակ | Հատի գին ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** | Գումար ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** |
|---|---|---|---|---|
| 1 | Թափքի նորոգման և ներկման աշխատանքներ | 1.00 | 285,570.00 դր. | 285,570.00 դր. |
| 2 | | | | |
| 3 | | | | |
| 4 | | | | |
| 5 | | | | |
| 6 | | | | |
| 7 | | | | |
| 8 | | | | |
| 9 | | | | |
| 10 | | | | |
| 11 | | | | |
| 12 | | | | |
| 13 | | | | |
| 14 | | | | |
| 15 | | | | |
| 16 | | | | |
| 17 | | | | |
| 18 | | | | |
| 19 | | | | |
| 20 | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 21 | | | | |
| 22 | | | | |
| 23 | | | | |
| 24 | | | | |
| 25 | | | | |
| 26 | | | | |
| 27 | | | | |
| 28 | | | | |
| 29 | | | | |
| 30 | | | | |
| Ընդամենը ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ **20%)** | | | **285,570.00** դր. | |

Հավելված 10

| Ավտոմեքենայի Տվյալներ | |
|---|---|
| Մակնիշ | TOYOTA |
| Մոդել | CAMRY |
| Շարժիչ | 3 |
| Տարեթիվ | 2022 |
| Պետ. Համարանիշ | 275 CL 61 |
| Նույնականացման համար | XW7B14HK20S224094 |

| ՀԱվելված |
|---|
| № 2023/10 |
| 10.03.2023թ. |
| |
| |
| |
| |

| # | Նկարագրություն | Քանակ | Հատի գին ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** | Գումար ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ **20%** |
|---|---|---|---|---|
| 1 | Թափքի նորոգման և ներկման աշխատանքներ | 1.00 | 598,500.00 դր. | 598,500.00 դր. |
| 2 | Ընթացային մասի վերանորոգման աշխատանքներ | 1.00 | 165,600.00 դր. | 165,600.00 դր. |
| 3 | Անվաբացքի կարգաբերում | 1.00 | 14,760.00 դր. | 14,760.00 դր. |
| 4 | Դուռ | 1.00 | 288,000.00 դր. | 288,000.00 դր. |
| 5 | Դուռ | 1.00 | 235,800.00 դր. | 235,800.00 դր. |
| 6 | Դռան ծխնի | 1.00 | 18,900.00 դր. | 18,900.00 դր. |
| 7 | դռան ծխնի | 1.00 | 18,900.00 դր. | 18,900.00 դր. |
| 8 | Անվածածկ | 1.00 | 246,600.00 դր. | 246,600.00 դր. |
| 9 | Անվածածկի մաս | 1.00 | 78,300.00 դր. | 78,300.00 դր. |
| 10 | Պաշտպանիչ ժապավեն | 1.00 | 54,900.00 դր. | 54,900.00 դր. |
| 11 | Անվածածկի պաշտպանիչ | 1.00 | 25,200.00 դր. | 25,200.00 դր. |
| 12 | Հողմապակու ռետին | 1.00 | 11,700.00 դր. | 11,700.00 դր. |
| 13 | Անվաբռունցք | 1.00 | 126,000.00 դր. | 126,000.00 դր. |
| 14 | Անվակունդ | 1.00 | 117,000.00 դր. | 117,000.00 դր. |
| 15 | Կախոցի թև | 1.00 | 55,800.00 դր. | 55,800.00 դր. |
| 16 | Կախոցի թև | 1.00 | 36,900.00 դր. | 36,900.00 դր. |
| 17 | Կախոցի թև | 1.00 | 41,400.00 դր. | 41,400.00 դր. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 18 | Կախոցի թև | 1.00 | 62,100.00 դր. | 62,100.00 դր. |
| 19 | Լուսարձակի բարձրության տվիչ | 1.00 | 144,900.00 դր. | 144,900.00 դր. |
| 20 | Անվադողի օդի ճնշման տվիչ | 1.00 | 43,200.00 դր. | 43,200.00 դր. |
| 21 | Անվադողի օդի ճնշման տվիչ նորոգման հավ-ծու | 1.00 | 3,600.00 դր. | 3,600.00 դր. |
| 22 | Հարվածամեղմիչ | 1.00 | 28,800.00 դր. | 28,800.00 դր. |
| 23 | Ձեռքի արգելակի ակտուատոր | 1.00 | 241,290.00 դր. | 241,290.00 դր. |
| 24 | Միջադիր | 1.00 | 900.00 դր. | 900.00 դր. |
| 25 | Մեկանգամյա օգտագործման ամրակ | 24.00 | 450.00 դր. | 10,800.00 դր. |
| 26 | | | | |
| 27 | | | | |
| 28 | | | | |
| 29 | | | | |
| 30 | | | | |
| ...նդամենը ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ 20%) | | | **2,669,850.00** դր. | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ՆԳՆ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
*Հ/Հ 900011021947*
*ՀՎՀՀ 01533334*
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ police_gnumner@police.am

________ Ա. Հովհաննիսյան
/ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր/
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Բայրոնի փող. 3
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1570003667300100
ՀՎՀՀ 01557589
հեռ. 010 77-70-10

Էլ. փոստ: info@toyota.am

տնօրեն ________ Վ. Գզրարյան
(ստորագրություն)

Հավելված N 2
<< 08 >> 06. 2023 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ Ո ՄԱԾՁԲ-2023-ԱՎԾ/Ա-38 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130/12 | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | | | | | | 5 993 100 | 8 989 700 | 8 989 700 | 8 989 700 | 11 986 290 | 11 986 290 | 11 986 290 | **11 986 290** |

| | |
|---|---|
| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
| ՀՀ ՆԳՆ ոստիկանություն | <<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | ք. Երևան, Բայրոնի փող. 3 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության Աշխատակազմի գործառնական վարչություն | <<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ |
| Հ/Հ *900011021947* | Հ/Հ 1570003667300100 |
| ՀՎՀՀ *01533334* | ՀՎՀՀ **01557589** |
| Հեռ. 010 59-61-52 | հեռ. 010 77-70-10 |
| Էլ. հասցեն՝ police_gnumner@police.am | Էլ. փոստ: info@toyota.am |
| ____________ Ա. Հովհաննիսյան / ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր/ | ____________ Կ. Գզրարյան տնօրեն |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված 3*
*<<      >>      2023 թ. կնքված*
*ՀՀ ՆԳՆ Ո ՄԱԾՁԲ-2023-ԱՎԾ/Ա-38 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ________________________ | ________________________ |
| ________________________ | ________________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| հվհհ ___________________ | հվհհ ___________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

, ե,      ե 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<      >>      2023 թ. կնքված
Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ <<      >>      2023 թ. կնքված դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույց/ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_______________________

ստորագրություն

_______________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_______________________

ստորագրություն

_______________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*<<      >>      2023 թ. կնքված*
*ՀՀ ՆԳՆ Ո ՄԱԾՁԲ-2023-ԱՎԾ/Ա-38 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _______ ի
Պատվիրատուի անունը
Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ______-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց** |
|---|---|
| ներկայացուցիչ՝ | հայտը նախագծած |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |